Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2015 թվականի ապրիլի 14-ի
№70Լ որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան **3**

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները **5**

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում 5
2. Սակագնային քաղաքականություն 7
3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում 11
4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ 12
5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում 13
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն 16
7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ 18

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը **21**

1. Էներգետիկայի բնագավառ 21
2. Ջրային ոլորտ 23
3. Հեռահաղորդակցության բնագավառ 24

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ **31**

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում (սակագնային քաղաքականության և ոչ մրցակցային ջրամատակարարման ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների տրամադրման մասով) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2014 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ

Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ

Մուշեղ Կոշեցյան՝ հանձնաժողովի անդամ

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
    - իրավաբանական և դատական սպասարկման բաժին,

- լիցենզավորման բաժին,

- զարգացման և մոնիթորինգի վարչություն՝
  - տեխնիկական բաժին,
  - տնտեսագիտական բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն՝
  - կարգավորման քաղաքականության բաժին,
  - ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին,
- դիմում-բողոքների քննարկման և նիստերի նախապատրաստման բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման և և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր գործառույթների առաջնահերթություններից է համարում կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը և միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման ու կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից և հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է պետական կառավարման տարբեր մարմինների հետ՝ հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելու և հանրության համար կարգավորման թափանցիկությունն ապահովելու, սպառողների կամ կարգավորվող անձանց նկատմամբ խտրականությունը բացառելու, սպառողների և կարգավորվող անձանց շահերը հավասարակշռելու, ինչպես նաև մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակները սահմանափակելու ու կարգավորման գործիքները կատարելագործելու նպատակով:

2014 թվականի հոկտեմբերին հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի նոր օրինակելի ձևը, որում ամրագրվել են կողմերի այն հիմնական և կարևոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք էական դեր են խաղում մատակարար–սպառող հարաբերություններում: Առավել հստակեցվել են մատակարարին ներկայացվող դիմում-բողոքների, վճարման փաստաթղթում սխալի հայտնաբերման դեպքում կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակը, դրանց քննարկման ընթացակարգը, մատակարարի կողմից մատուցվող

տեխնիկական սպասարկման ծառայությունների համար սպառողի կողմից համապատասխան վճարի վճարման կարգը: Ինչ վերաբերում է դրանց իրականացման մեխանիզմներին ու ժամկետներին, ապա դրանք արդեն իսկ ամրագրված են բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում, որն առավել ճկուն փաստաթուղթ է գործնական իրագործման փուլում առաջացող խնդիրներին լուծումներ տալու առումով:

2014 թվականի հունիսին համապատասխան որոշմամբ փոփոխություններ են կատարվել էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում, որոնց արդյունքում հստակեցվել են էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) և ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց կողմից կայանի կառուցումն (վերակառուցումն) ավարտելուց հետո հանձնաժողով ներկայացման ենթակա փաստաթղթերի և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկերը: Լիցենզավորման գործընթացի միասնական կարգավորման նպատակով կարգում ներառվել են գործունեության լիցենզիայում փոփոխությունների կատարման, լիցենզիայի կասեցման, դադարեցման և վերաձևակերպման վերաբերյալ կարգավորումներ:

Մշակվել և հաստատվել է Իրանի Իսլամական Հանրապետության հետ իրականացվող գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց գործարքի շրջանակում Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանվող էլեկտրական էներգիայի հաշվառման նոր կարգը: Միաժամանակ, փոփոխություններ են կատարվել 2004 թվականի նոյեմբերին հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգում՝ վերջինիս կանոնակարգումից հանելով Իրանի Իսլամական Հանրապետության հետ իրականացվող գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց գործարքը:

Մշակվել և հաստատվել է էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների պայմանագրային և տնօրինելի հզորությունների սահմանման կարգը, ինչպես նաև լրամշակվել են էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց միջև օպերատիվ փոխհարաբերությունների, էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի և էլեկտրական էներգիայի արտադրության, հաղորդման

լիցենզիա ունեցող անձանց միջև օպերատիվ փոխհարաբերությունների կարգերը:

Մաքսային Միությանը և Միասնական տնտեսական տարածքին, իսկ հետագայում՝ Եվրասիական Տնտեսական Միությանն անդամակցելու կապակցությամբ բնական մենաշնորհների ոլորտում միության անդամ պետությունների կողմից միասնական սկզբունքների և կարգավորման համընդհանուր կանոնների ձևավորման և սահմանման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հանձնաժողովն ուսումնասիրել է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործող պայմանագրերի, որոշումների, կարգադրությունների և հրահանգների նախագծերը, ներկայացրել կարգավորման ոլորտին առնչվող նկատառումներ և առաջարկություններ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի №126-Ա որոշմամբ հանձնաժողովը ճանաչվել է բնական մենաշնորհների կարգավորման ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համագործակցող պետական լիազոր մարմին:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հաշվետու տարվա ընթացքում, վերլուծելով 2014-2015թթ. հաշվարկային ժամանակահատվածի համար էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված անձանց անհրաժեշտ ծախսային հոդվածները և պարտավորությունները, հանձնաժողովը պարզել է, որ էլեկտրաէներգետիկական համակարգում առկա է ֆինանսական ճեղքվածք, որով պայմանավորված անհրաժեշտ է եղել վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի գործող սակագներն ավելացնել 3,85 դրամ/կՎտժ-ով (ներառյալ՝ ԱԱՀ-ն):

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային

մարժայի և մյուս ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, 2014-2015 թվականների էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության հաշվեկշռի վերաբերյալ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կանխատեսումները և հիմք ընդունելով էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու 2013 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների վերլուծության արդյունքները և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման հաստատագրված ամսական վճարները և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները: Արդյունքում՝ 2014 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ են մտել նոր սակագներ՝ ինչպես արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես և վերջնական սպառողների համար:

Միաժամանակ, հաշվի առնելով «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) առաջարկված սակագների փոփոխությունները, վերանայվել է նաև «ՀայՌուսկոգեներացիա» ՓԲԸ-ի «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 14 նորակառույց և վերանայվել 16 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են

վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: 2014 թվականի նոյեմբերին վերանայվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 148 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

2014 թվականին «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի նախատեսված պլանային նորոգումների ժամկետների փոփոխման հետ կապված՝ ճշգրտվել են կայանի 2014 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները: Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2015 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

Ուսումնասիրվել և հաստատվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանից առաքվող էլեկտրական էներգիայի համար վառելիքի տեսակարար ծախսի հաշվարկման մեթոդիկան:

Հաշվետու տարում լրամշակվել է էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից պարբերաբար հանձնաժողով ներկայացվող տեխնիկական տեղեկատվության ձևի մասով:

2014 թվականի փետրվար ամսին վարձակալության 9-րդ պայմանագրային տարվա համար սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով է դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ բազիսային սակագներում հաշվի առնելու մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ինչպես նաև 2013թ. մանրածախ ջրամատակարարման ծավալների և այլ եկամուտների ուսումնասիրության և

վերլուծության արդյունքներից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 179,596 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը): Սակայն, հաշվի առնելով «Երևան Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանների №2 հավելվածը և նպատակ ունենալով բաժանորդների նկատմամբ իրականացնել կայուն սակագնային քաղաքականություն, հանձնաժողովի աշխատակազմը «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ քննարկել և համաձայնություն է ստացել պայմանագրային 9-րդ տարվա մանրածախ ծառայությունների մատուցման սակագների ճշգրտված մեծության և գործող սակագների տարբերությունը ավելացնել պայմանագրային 10-րդ տարվա մանրածախ ծառայությունների բազիսային սակագնին՝ անփոփոխ թողնելով մանրածախ գործող սակագները և համապատասխան փոփոխություններ կատարելով ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմաններում:

Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման և այդ ծառայությունների միջև ծախսերի բաշխման սկզբունքները հստակեցնելու նպատակով 2014 թվականին մշակվել և հաստատվել են սակագների հաշվարկման և ընկերության ծախսերի բաշխման մեթոդիկաները: Լրամշակվել է նաև կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների առավելագույն սակագներից ցածր սակագների կիրառման կարգը: Բացի այդ, ընկերության անհրաժեշտ հասույթի վերլուծության և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկայում տեղի ունեցող զարգացումների արդյունքում նվազեցվել են որոշ ծառայությունների սակագներ:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2015 թվականի անվանական կազմը և, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը, հանրային ծառայությունների

կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում

Լիցենզավորման գործառույթն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է էլեկտրական էներգիայի արտադրության 42 լիցենզիա, ստացել է լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման՝ 19, լիցենզիայի վերաձևակերպման՝ 12, լիցենզիաների պայմաններում փոփոխություններ կատարելու 24 հայտեր: Ուժը կորցրած է ճանաչվել էներգետիկայի բնագավառի 36 լիցենզիա, որից 25-ը՝ կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման կամ վերաձևակերպման նպատակով հանձնաժողով դիմելու արդյունքում: Վերոնշյալ լիցենզավորված անձանց, համաձայն 2013 թվականի հունիսի 19-ին ընդունված «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, տրամադրվել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա:

Հանձնաժողովը երկարաձգել է ջրային համակարգի օգտագործման 2 թույլտվության գործողության ժամկետ և դադարեցրել համանման 1 թույլտվության գործողություն:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի 8 լիցենզիա,

ռադիոհաճախականությունների օգտագործման՝ 12, սիրողական ռադիոյի՝ 4 և համարների զբաղեցման 3 թույլտվություն:

Միևնույն ժամանակ, 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովում իրավական փորձաքննություն են անցել և գրանցում ստացել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 256 պայմանագրեր:

4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների պահպանման գործընթացին՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի միջոցով հանձնաժողովը մշտապես բարձրացնում է մոնիթորինգի իրականացման արդյունավետությունը:

Հանձնաժողովը էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է ստանում սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Մասնավորապես, մշտական մոնիթորինգի են ենթարկվում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվում են

առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ եռամսյակային արդյունքներով, հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում:

2014 թվականին էլեկտրամատակարարման և գազամատակարարման ընդհատումների վերականգնման՝ սահմանված ժամկետների խախտման համար կարգավորվող ընկերությունների կողմից շուրջ 26,0 հազար սպառողների տույժերի վճարման ավտոմատ եղանակով վճարվել է 24.0 մլն դրամ տույժ:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացին: 2014 թվականին իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը որոշ դեպքերում չի պահպանել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման ժամկետները կամ այդ առնչությամբ հանձնաժողով է ներկայացրել ոչ հավաստի տեղեկատվություն: Նշված խախտումների համար ընկերությունը ենթարկվել է տուգանքի՝ 15 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում

Հանձնաժողովի գործառույթներից առանձնանում է նաև էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, ինչպես նաև ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում է ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում

համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Ներկայումս էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրեր իրականացնում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները: Վերջինիս ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը և հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի բարելավմանը, մաշված սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրմանը, ինչպես նաև ընկերությունների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը: Հանձնաժողովը մշտապես ուշադրություն է դարձնում կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ կատարել առավել վատթար սպասարկման որակի ցուցանիշներ ունեցող բնակավայրերում՝ դրանք բարելավելու նպատակով:

2014 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների 2013 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Քննարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների կողմից համաձայնեցման ներկայացված 2015 թվականի ներդրումային ծրագրերը, քննարկվել է նաև «Միաջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014-2018 թվականների ներդրումային ծրագիրը և ընդունվել համապատասխան որոշում:

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործում են 165 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 48-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 282 ՄՎտ, և դրանք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 786 մլն կՎտժ

էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է 114 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 396 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 213 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 396 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,18 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2014 թվականին՝ մինչև դեկտեմբերի 31-ը, լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու և լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար հանձնաժողովը կայացրել է ընկերություններին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 49 որոշում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Այդ առնչությամբ էական նշանակություն են ունեցել հատկապես հանձնաժողովի կողմից 2014 թվականի ընթացքում հանրային կազմակերպությունների գնումների ոլորտում առկա խնդիրների նվազեցման և գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարված բարեփոխումները: Մասնավորապես, 2014 թվականի մարտին հանձնաժողովն ընդունել է «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու և այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանելու մասին», իսկ հունիսին՝ «Հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգը և հանրային

կազմակերպությունների կողմից կատարված գնումների մասին հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» որոշումները, որոնցում, հաշվի առնելով նաև միջազգային փորձը, սահմանվել են այնպիսի նոր պահանջներ, որոնք հանրային կազմակերպությունների գնումների գործընթացը դարձնում են առավել արդյունավետ, մրցակցային, թափանցիկ և հրապարակային: Նշված որոշումների արդյունքում ներկայումս հանրային կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների վեբ կայքերում:

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում հաշիվների և ենթահաշիվների համակարգի ներդրումը, ինչը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ֆինանսական հաշվետվությունների ձևերը, որոնց արդյունքում կրճատվել են ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունը:

Կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և

ենթահաշիվների համակարգը կատարելագործելու նպատակով, հանձնաժողովը նախաձեռնել է ընկերությունների համար անհատական հաշվային պլանների մշակման և ներդրման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ընկերություններից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել ընկերությունների կազմակերպաիրավական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

Գազամատակարարման համակարգի ընկերությունների համար արդեն մշակվել և հաստատվել են հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների լրամշակված անհատական ձևեր: Ներկայում աշխատանքներ են ընթանում էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների համար հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ մշակելու ուղղությամբ, որոնք նախատեսվում է ավարտել 2015 թվականին:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության արդյունքներն էական դեր են կատարում ինչպես հանձնաժողովի կողմից հանրային ծառայությունների ոլորտում իրականացվող սակագնային քաղաքականության, այնպես էլ ընկերությունների կողմից ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացներում:

Մասնավորապես, ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունները և կատարված ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը համադրելու նպատակով հանձնաժողովը 2014 թվականին լրամշակել է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հիմնական միջոցների մասին տեղեկատվական ձևերը, ինչը հնարավորություն կտա ներկայացված ներդրումային ծրագրերի շրջանակում ընկերությունների կողմից ձեռք բերված հիմնական միջոցները նույնականացնել ըստ գույքային համարների և հաշվապահական հաշվառման հաշիվների (ենթահաշիվների):

Մշակվել են նաև օտարված (լուծարված) և վաճառված հիմնական միջոցների վերաբերյալ տեղեկատվական նոր ձևեր, ինչը հնարավորություն կտա հանձնաժողովին հետևել և վերահսկել կարգավորվող ընկերությունների կողմից հիմնական միջոցների օտարման (լուծարման) և վաճառքի գործընթացները:

Էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի կարգավորվող ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան ներկայացրել են եռամսյակային արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումների կատարման գործընթացը վերահսկելու նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվություն, որի վերլուծության արդյունքում ընկերության նկատմամբ երկու անգամ հարուցել է վարչական վարույթ և կիրառել դրամական տուժանք:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ

Հանձնաժողովի՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարմանն են ուղղված նրա հիմնական գործունեության ընթացիկ ուղղությունները:

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում որոշումներն ընդունում է նիստերի միջոցով, որոնք դռնբաց են և, որպես կանոն, անցկացվում են ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Հանձնաժողովը նախապես հայտարարում է նիստերի անցկացման տեղի և ժամի մասին, հնարավորություն ընձեռում շահագրգիռ անձանց և հանրության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգն ու քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով:

2014 թվականի ընթացքում հրավիրվել է հանձնաժողովի 73 նիստ և ընդունել 482 որոշում:

Հանձնաժողովում գործում է նաև թեժ գծի հեռախոսակապ, որի միջոցով սպառողը կարող է ներկայացնել բողոք, հարցադրում, առաջարկություն, ստանալ տեղեկատվություն կամ խորհրդատվություն մատակարար-սպառող հարաբերություններում իր իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ: Սպառողը կարող է նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի www.psrc.am պաշտոնական կայքի «Տեղեկատվություն սպառողին» և «Հարց ու պատասխան» բաժիններից: 2014 թվականի ընթացքում հանձնաժողովն ստացել է 732 հարցադրում և բողոք, որոնցից 287-ը՝ գրավոր, 445-ը՝ թեժ գծի հեռախոսակապով և սպառողների ընդունելությունների ընթացքում: Բոլոր հարցադրումներին և բողոքներին տրվել են համապատասխան պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն: Վիճահարույց հարցերը քննարկվել են շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և ստացել համապատասխան լուծումներ, դրանք տեղում ուսումնասիրելու անհրաժեշտության դեպքում՝ իրականացվել են ստուգայցեր: Էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններում սպառողների դիմում-բողոքների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը ստացված դիմում-բողոքների վերաբերյալ ընկերությունները ներկայացնում են տեղեկատվություն, որի վերլուծության արդյունքներն ամփոփելուց հետո հրապարակվում է հանձնաժողովի www.psrc.am պաշտոնական կայքի համապատասխան բաժնում: Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ոլորտի վերաբերյալ սպառողների դիմում-բողոքների և հարցադրումների տարեկան տեղեկանքը տեղադրվում է հանձնաժողովի www.psrc.am պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը, որը միտված է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը պատշաճ լուսաբանելու և հանրությանն

առավել ընկալելի ներկայացնելու խնդիրներին: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես են գալիս ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները: Նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստներին և հարցերի ու ելույթների միջոցով ներկայացնում սեփական տեսակետը քննարկվող որոշումների առնչությամբ: Մշտական բնույթ է կրում համագործակցությունը նաև ՀՀ հանրային խորհրդի և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ՝ սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդրիների առնչությամբ:

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև նոր արտադրական հզորությունները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2013 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 7.1 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 6.6 մլրդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը:

Հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը

1. Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառում մատակարար-սպառող հարաբերություններում առաջացած խնդիրների կարգավորման և սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով 2014 թվականին էական փոփոխությունների են ենթարկվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման

կանոնները:

Արմատական փոփոխություններ են կատարվել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում, որոնք համաձայն.

- մատակարարը պարտավոր է գրանցել վերստուգիչ հաշվառքի սարքի ցուցմունքները, ինչպես նաև պայմանագրում նշել վերջինիս գործարանային համարը և տեխնիկական հարաչափերը, ինչը սպառված էլեկտրաէներգիայի հաշվառմանն առնչվող վիճահարույց իրավիճակներում կնպաստի խնդրի ճշգրիտ լուծմանը.
- մատակարարը պարտավոր է սպառողի (բացառությամբ բնակչության) առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել սպառողի ներկայությամբ, եթե վերջինս ներկայացրել է նման պահանջ.
- սպառողի գրավոր դիմումի դեպքում, վերջինիս նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր, կամ էլեկտրոնային փոստով) մատակարարը պետք է ծանուցի սպառողին նախորդ հաշվարկային ամսում մատակարարված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշների մասին,
- հստակեցվել են վճարման փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում Պայմանագրային կողմերի գործողությունները.
- ամբողջովին վերախմբագրվել է առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման կարգին առնչվող գլուխը, ինչի արդյունքում հստակեցվել է վերահաշվարկման մեթոդաբանությունը՝ շաղկապելով այն առևտրային հաշվառքի սարքի բնույթին: Ընդ որում, վերստուգիչ հաշվառքի սարքի առկայության դեպքում վերահաշվարկը պետք է իրականացվի վերջինիս ցուցմունքերի համապատասխան: Բացի այդ, եթե սպառողը համաձայն չէ վերահաշվարկի արդյունքներին և վճարում է էլեկտրաէներգիայի արժեքի իր կողմից չվիճարկվող մասը, ապա մատակարարը իրավունք չունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ մինչև վեճի լուծումը.
- վերախմբագրվել և հստակեցվել է առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման կարգը, որով սպառողին իրավունք է տրվել իր

առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը սեփական միջոցների հաշվին պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների:

Ներկայում աշխատանքներ են տարվում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը բնական գազի բաշխման ցանցին միացման կանոնների լրամշակման ուղղությամբ: Դիտարկման փուլում են գտնվում բնական գազի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ քայլերի, գործընթացների համար սահմանված ժամկետների կրճատման, ինչպես նաև միացման վճարների սահմանման հարցերը: Նախատեսվում է աշխատանքները ավարտել և նոր համակարգն ամբողջությամբ գործողության մեջ դնել 2015 թվականի ընթացքում:

Բնակիչ-բաժանորդներին մատակարարված բնական գազի ծախսի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման այլընտրանքային եղանակների ներդրման նպատակով լրամշակվել են բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները: Արդյունքում 2015 թվականի հունվարի 1-ից բնակիչ-բաժանորդներն իրենց նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր կամ էլեկտրոնային փոստով) հնարավորություն կունենան ծանոթանալ նախորդ հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշների մասին:

Լրամշակվել են նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների մի շարք այլ դրույթներ: Հստակեցվել են վճարման փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում մատակարարի և սպառողի կողմից իրականացվող գործողությունները, ինչպես նաև կատարելագործվել են առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված բնական գազի վերահաշվարկման մոտեցումները:

2. Ջրային ոլորտ

Հանձնաժողովը հետևողական քայլեր է ձեռնարկում խմելու ջրի մատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև հետևում է դրանց պահպանմանը՝ պարբերաբար իրականացվող մոնիթորինգների միջոցով:

Հանձնաժողովի կողմից փոփոխություններ են կատարվել խմելու ջուր մատակարարող ընկերությունների պասարկման որակի նվազագույն պահանջներում, որի արդյունքում 2014 թվականից ջրամատակարար

ընկերություններին արգելվել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում պլանային աշխատանքներ իրականացնել շաբաթ և կիրակի, ինչպես նաև տոներին և հիշատակի օրերին: Այս մոտեցման նպատակը խմելու ջրի մատակարարման ընդհանտումների դեպքում բնակչությանը պատճառվող անհարմարությունների նվազեցումն է:

Բացի այդ, 2014 թվականին հանձնաժողովն ուսումնասիրել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից հրապարակված ջրամատակարարման գրաֆիկների համապատասխանությունը ջրամատակարարման տևողության փաստացի ցուցանիշներին: Այդ նպատակով ընկերության սպասարկման տարածքում գտնվող 30 համայնքներում հարցում է կատարել ջրամատակարարման փաստացի տևողության վերաբերյալ, իսկ Երևան քաղաքում մոնիթորինգն իրականացվել է լոգերների փաստացի գրանցած ցուցմունքների հիման վրա: Մասնավորապես, Երևան քաղաքի բաժանորդների ջրամատակարարման փաստացի տևողության ուսումնասիրության նպատակով «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ներկայացրել է մի շարք թաղամասերում մշտապես տեղակայված լոգերների ցուցմունքները, որոնց վերծանման արդյունքում ջրամատակարարման փաստացի տևողության ցուցանիշները համեմատվել են հրապարակված գրաֆիկների հետ և ամփոփվել: Մոնիթորինգի արդյունքների հիման վրա կազմվել է վերլուծական տեղեկանք, որում ներառվել են նաև ընկերության կողմից ջրամատակարարման բարելավմանն ուղղված առաջարկություններ և հրապարակվել հանձնաժողովի վեբ-կայքում:

Այսպիսով, հանձնաժողովի կողմից սահմանվող սպասարկման որակի նվազագույն պայմանների տարեկան փոփոխության արդյունքում խմելու ջուր մատակարարող ընկերությունները 2015 թվականի մայիսի 1-ից պետք է ապահովեն ջրամատակարարման տևողության հետևյալ նվազագույն ցուցանիշները.

- «Երևան Ջուր» ՓԲԸ-ն Երևան քաղաքի բոլոր սպառողներին ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում պետք է ապահովի նվազագույնը 17-ժամյա, իսկ սպառողների 78,1%-ին՝ 24-ժամյա ջրամատակարարմամբ: Եղվարդ քաղաքում և գյուղական համայնքներում բոլոր սպառողներին ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում պետք է ապահովի նվազագույնը 4-ժամյա, իսկ սպառողների 55,0%-ին՝ 24-ժամյա ջրամատակարարմամբ.

- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն սպառողների 99,0%-ին, իսկ հոկտեմբերի 1-ից՝ բոլոր սպառողներին ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում պետք է ապահովի նվազագույնը 4-ժամյա, իսկ սպառողների 39,0%-ին՝ 24-ժամյա ջրամատակարարմամբ.
- «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն Վանաձոր քաղաքի բոլոր սպառողներին ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում պետք է ապահովի նվազագույնը 4-ժամյա, սպառողների 70,3%-ին՝ 24-ժամյա ջրամատակարարմամբ: Իսկ գյուղական համայնքների բոլոր սպառողներին պետք է ապահովի 24-ժամյա ջրամատակարարմամբ.
- «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն Գյումրի քաղաքի բոլոր սպառողներին ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում պետք է ապահովի նվազագույնը 6-ժամյա, սպառողների 50,6%-ին՝ 24-ժամյա ջրամատակարարմամբ: Իսկ գյուղական համայնքների բոլոր սպառողներին պետք է ապահովի 24-ժամյա ջրամատակարարմամբ.
- «Նոր Ակունք» ՓԲԸ-ն բոլոր սպառողներին (բացառությամբ՝ Քարակերտ համայնքի) պետք է ապահովի 24-ժամյա ջրամատակարարմամբ: Իսկ Քարակերտ համայնքի բոլոր սպառողներին ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում պետք է ապահովի նվազագույնը 10-ժամյա ջրամատակարարմամբ:

3. Հեռահաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ 2014 թվականին աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, արդար և բաց մրցակցության երաշխավորման, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են հետևյալ աշխատանքները.

- Հանրային շարժական բջջային կապի ծածկույթ չունեցող բնակավայրերն առնվազն մեկ օպերատորի կողմից նման ծածկույթով ապահովելու նպատակով հանձնաժողովը պարտավորեցրել է «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ

Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություններին զարգացնել և արդիականացնել իրենց հանրային շարժական բջջային կապի ցանցերը: Կատարված աշխատանքների արդյունքում՝ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր քաղաքային և գյուղական համայնքներն ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, համայնքների 4,7 տոկոսն ապահովված է 1 օպերատորի, 18,7 տոկոսը՝ 2 օպերատորների և 76,6 տոկոսը՝ 3 օպերատորների հանրային շարժական կապի ծածկույթով: Հանրային շարժական կապի ծածկույթի ընդլայնման և տեխնոլոգիական զարգացման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

- Մրցակցության խթանման և սպառողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում՝ 2014 թվականի ապրիլի 1-ից մեկնարկել է շարժական կապի համարների տեղափոխելիության ծառայությունը, որը հնարավորություն է տալիս բաժանորդներին առանց խոչընդոտների և անվճար փոխել շարժական կապի օպերատորին՝ պահպանելով իր գործող հեռախոսահամարը: Հեռախոսահամարների տեղափոխման գործընթացը իրականացվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ «մեկ պատուհանի» սկզբունքով, դիմում ներկայացնելով միայն նախընտրելի օպերատորին: 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2015 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում շարժական կապի համարների տեղափոխելիության ծառայությունից օգտվել է շարժական կապի շուրջ 24000 բաժանորդ:
- Շարժական կապի համարների տեղափոխելիության ծառայության խրախուսման և սպառողների համար այդ ծառայության օգտավետության ապահովման նպատակով, հանրային շարժական բջջային կապի օպերատորներին տրամադրվել են հանրային շարժական կապի ցանցի տարածաշրջանային նոր կոդեր: Տարածաշրջանային նոր 41, 43 և 49 կոդերը համապատասխանաբար տրամադրվել են «Օրանժ Արմենիա», «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ընկերություն-ներին:
- Հանձնաժողովի 2014 թվականի ապրիլին ընդունված համապատասխան որոշման համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական

կապի օպերատորները իրենց գործառնական գրասենյակներում և ինտերնետային կայքերում հրապարակել են իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ծածկույթ չունեցող բնակավայրերի ցանկի, իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ծածկույթով ապահովված բնակավայրերի ցանկի և այդ բնակավայրերում կիրառվող շարժական բջջային կապի տեխնոլոգիաների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը.

- Հանձնաժողովի 2014 թվականի մարտի համապատասխան որոշման համաձայն՝ հանրային շարժական կապի օպերատորներն իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ծածկույթի սահմաններում անվճար ապահովել են իրենց և այլ օպերատորների բաժանորդների հասանելիությունը արտակարգ պատահարների արագ արձագանքման «911» և «112» ծառայությանը: Բացի այդ, օպերատիվ արձագանքման ծառայությունների արդյունավետության բարձրացման աշխատանքների շրջանակում, հանձնաժողովի որոշմամբ ապահովվել է օպերատիվ արձագանքման կոդերին զանգահարելու դեպքում զանգահարողի հեռախոսահամարի ներկայացման հնարավորությունը:
- Հանձնաժողովի 2014 թվականի հունվարին կայացրած որոշմամբ կանոնակարգվել է հանրային շարժական կապի հեռախոսասարքերի և պլանշետների ապակոդավորման ծառայությունը: Մասնավորապես, օպերատորները որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ առաջարկվող սարքերի հետ միաժամանակ, որպես այլընտրանք, պետք է առաջարկեն նաև այդ սարքերի ապակոդավորված շուկայական արժեքով տարբերակը: Որոշակի ժամկետով կամ առանց բաժանորդագրման պարտավորությամբ առաջարկված կոդավորված սարքերի ապակոդավորումը բաժանորդի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման դեպքում, օպերատորը կիրականացնի, անվճար՝ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում: Այն սարքերը, որոնց ապակոդավորումը սարք արտադրողի կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում հնարավոր չէ իրականացնել, ապա ապակոդավորումն ապահովվում է առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

- Համարային ռեսուրսի արդյունավետ կառավարման նկատառումներից ելնելով՝ 2014 թվականի հուլիսին ընդունված որոշմամբ լրամշակվել են համարների կամ կոդերի զբաղեցման թույլտվությունների հատկացման և օգտագործման կանոնները:
- Իրականացվել են շարժական կապի տեղական և միջազգային շուկաների ուսումնասիրություններ՝ հանրային շարժական բջջային կապի ցանցերի միջև գործող փոխկապակցման վճարների մասով, ուսումնասիրվել է փոխկապակցման վճարների մակարդակն արտացոլող միջազգային փորձը, կազմակերպվել են քննարկումներ հանրային շարժական բջջային կապի օպերատորների հետ: Կատարված աշխատանքների արդյունքում, հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերին ընդունված որոշմամբ փոփոխություն է կատարվել գործող փոխկապակցման վճարներում: Սահմանվել է ժամանակացույց, ըստ որի պետք է նվազեցվեն «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև գործող փոխկապակցման վճարները, մասնավորապես, 2015 թվականի հունվարի 1-ից նվազեցնելով 1 դրամով՝ սահմանելով 10,4 դրամ, իսկ 2016 թվականից հետո՝ ևս 1 դրամով՝ սահմանելով 9,4 դրամ (առանց ԱԱՀ):
- Միջազգային շուկաներում փոխկապակցման ծառայությունների վճարների փոփոխության կապակցությամբ հանձնաժողովի 2014 թվականի հունիսին ընդունված որոշմամբ վերանայվել և որոշակիորեն փոփոխվել է շարժական կապի ցանցերում միջազգային մուտքային զանգերի վերջավորման փոխկապակցման վճարը:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու և տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու կարգավորման քաղաքականության արդյունքում 2014 թվականին՝

- Երևան քաղաքում ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը հասցվել է 100%-ի, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 93,85 %-ի.
- հանրապետության տարածքում գործող շարժական բջջային կապի 3G տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցերի ծածկույթն ընդլայնվել է, իսկ բաժանորդների թվաքանակն՝ ավելացել: Եթե 2013 թվականին շարժական բջջային կապի բաժանորդների քանակը կազմել էր 3346275, ապա 2014 թվականի

դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 3459137: Ընդ որում, ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների 99,2 տոկոսն ապահովված է հանրային շարժական բջջային կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով.

- զարգացում է ունեցել 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված շարժական կապի ցանցը, որը հասանելի է Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ծաղկաձոր, Էջմիածին և Արմավիր քաղաքներում: 2015 թվականի ընթացքում նախատեսվում է 4G/LTE ցանցի ենթակառուցվածքների ընդլայնումը նաև այլ բնակավայրերում.
- Երևան քաղաքի ավելի քան 90 տոկոս տարածքում, ինչպես նաև Աշտարակ, Արտաշատ, Մասիս, Արմավիր, Մեծամոր, Մարտունի, Սևան, Վանաձոր, Չարենցավան, Հրազդան, Գյումրի, Կապան, Քաջարան, Իջևան, Դիլիջան, Աբովյան, Ալավերդի և Արարատ քաղաքներում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: Նախատեսվում է, որ այս տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցերը լայնածավալ տարածում կունենան նաև հանրապետության այլ բնակավայրերում.
- տարեվերջի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 87897 Մբիթ/վ, որը 2013 թվականի համեմատությամբ աճել է մոտ 16%-ով.
- ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության 2008-2014 թվականների աճի դինամիկան.



- մրցակցության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է նաև այդ ծառայության սակագինը: 2014 տարեվերջին այն կազմել է 5200 դրամ՝ 2013 թվականի համեմատությամբ նվազելով շուրջ 32%-ով.
- ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագնի 2008-2014 թվականների նվազման դինամիկան.



- լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում (առանց՝ շարժական 3G) գերակշռել են լարային xDSL տեխնոլոգիայով օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը 2014 թվականին կազմել է շուրջ 57 տոկոս՝ 2013 թվականի համեմատ նվազելով շուրջ 9 տոկոսով, միևնույն ժամանակ արձանագրվել է 9 տոկոս աճ օպտիկամանրաթելային FTTx տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակում.
- մանրածախ շուկայում լայն տարածում են ստացել առավել արագագործ տեխնոլոգիաների (օրինակ՝ FTTH) վրա հիմնված ինտերնետ հասանելիության սակագնային փաթեթներ, որոնք սպառողներին առաջարկվում են ինչպես ինքնուրույն ծառայության, այնպես էլ «Երեքը մեկում (Triple Play)» ձևաչափով՝ ներառելով նաև «ԱՅՓԻ» հեռուստատեսություն և հեռախոսակապ: Մասնավորապես, շուկայում «Երեքը մեկում» ծառայությունների փաթեթով «ԱՅՓԻ» հեռուստատեսության

և հեռախոսակապի հետ միասին առաջարկվում է նվազագույնը ինտերնետ հոսքի 11Մբ/վ արագություն՝ 10000 դրամ արժեքով: Պետք է արձանագրել, որ շուկայում նշված տեսակի ծառայության տարածմանը զուգընթաց նվազում են նաև առաջարկվող սակագները.

- ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը (այդ թվում՝ շարժական 3G և 2G) 2014 թվականին կազմել է 2084196, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 3 տոկոսով.
- ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը (ներառյալ՝ շարժական 3G) 2014 թվականին կազմել է 1293467: Ստորև բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի 2008-2014 թվականների աճի դինամիկան.



- էականորեն կրճատվել է ոչ լայնաշերտ՝ հեռախոսակապի միջոցով (dial-up) ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը: Եթե 2013 թվականին արձանագրվել էր 1825 բաժանորդ, ապա 2014 թվականին՝ 1466 բաժանորդ:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը մշտապես համագործակցում է տարբեր միջազգային կառույցների հետ: Մասնավորապես, մշտական համատեղ աշխատանքներ են տարվում Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի, Հեռահաղորդակցության միջազգային միության, կապի տարածաշրջանային համագործակցության և Եվրոպական Միության հովանու ներքո գործող Ինոգեյթ ծրագրի հետ:

ՀՀ էներգետիկայի համակարգի տարածաշրջանային ինտեգրման նպատակով, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ և այդ գործակալության կապալառու «Tetra Tech ES, Inc.» ընկերության օժանդակությամբ, «Ցածր արտանետումների ռազմավարության և մաքուր էներգիայի զարգացում Եվրոպայում և Եվրասիայում» ծրագրի շրջանակում, 2014 թվականի նոյեմբերի 4-ին, Թբիլիսիում, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարման պետական կարգավորման հանձնաժողովի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հաշվի առնելով կողմերի փոխադարձ շահագրգռվածությունը էներգետիկայի և ջրամատակարարման կարգավորման ոլորտներում համագործակցելու, տեղեկատվության փոխանակում ապահովելու հարցերում, ինչպես նաև էներգետիկայի և ջրամատակարարման կարգավորման ոլորտների արդյունավետ և հետևողականորեն կարգավորման ռազմավարական նշանակությունը, հուշագրով սահմանվել են հետագա համագործակցության հիմնական ուղղությունները:

Հանձնաժողովը մասնակցել է Եվրոպական Միության Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակում ստեղծված հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների խմբի աշխատանքներին:

2014 թվականին հանձնաժողովի աշխատակիցները մասնակցություն են ունեցել Եվրոպական Միության Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակում կազմակերպված լիագումար նիստերին և աշխատանքային սեմինարներին, որտեղ քննարկվել են հեռա-հաղորդակցության ոլորտի կարգավորմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ: